ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«07» հունվարի 2024 թ. N 91-Ա/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 4-Ի N 147-Ա/1 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական գաղտնիքի մասին» 2023 թվականի մարտի 1-ի ՀՕ-49-Ն օրենքի 29-րդ հոդվածի 6-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի հունիսի 16-ի N 647-Ա որոշման հավելվածի 25-րդ կետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2020 թվականի սեպտեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներքին գործավարության կարգը հաստատելու մասին» N 147-Ա/1 հրամանի հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) VIII-րդ գլխի վերնագրում «սահմանափակ տարածման ծառայողական» բառերը փոխարինել «հրապարակման ոչ ենթակա» բառերով.
2) 104-րդ և 106-րդ կետերում ««Ծառայողական օգտագործման համար» նշումով» բառերը փոխարինել ««Հրապարակման ոչ ենթակա» դրոշմագրով» բառերով, իսկ 105-րդ կետում ««Ծառայողական օգտագործման համար»

նշումը» բառերը փոխարինել ««Հրապարակման ոչ ենթակա» դրոշմագիրը» բառերով:

2. Հրամանի հավելվածի VIII-րդ գլխից հետո լրացնել նոր VIII[1] գլուխ հետևյալ բովանդակությամբ՝

VIII[1] «Սահմանափակ տարածման ծառայողական փաստաթղթերի գրանցումը»

119.1 «Սահմանափակ տարածման ծառայողական» (այսուհետ՝ «ԾՕՀ») փաստաթղթերի գործավարությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

119.2 «ԾՕՀ» նշումով տեղեկությունների ներքին գործավարությունը կազմակերպում է քարտուղարությունը՝ համակարգի միջոցով:

119.3 «ԾՕՀ» նշումով փաստաթղթաշրջանառության դեպքում համակարգի «Վերնագիր» դաշտի սկզբում, ինչպես նաև մտից և ելից փաստաթղթի (տեղեկակրի) վերին աջ անկյունում գրվում է ԾՕՀ հապավումը:

119.4 «ԾՕՀ» տեղեկությունների տեղեկակիրների վրա կատարվում է «ԾՕՀ» նշումը:

119.5 «ԾՕՀ» նշման անհրաժեշտությունը որոշում է այդ փաստաթղթի հեղինակը (կատարողը) և ստորագրելու կամ հաստատելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը:

6/7/2024

X

ՆԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

Signed by: MKRTCHYAN NAREK 3014890804

Ն. ՄԿՐՏՉՅԱՆ